



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn

✓ 2206

1999

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ժ

# Վ Ր Ե Ժ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

Ա. Ա.

1357



ՄԱՐՍԵԼ

ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱՐԱՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

MARSEILLE

IMPRIM. ET PAPETERIE DU MIDI, M. SCHICKLER

44, Allées de Meilhan, 44

1891

# Վ Ր Ե Ժ

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ \*)

## Ա

Հիանալի է Բալկանեան սարերի հարաւային ստորոտի հովիսաը։ Ժողովրդից նա «Վարդերի Հովիտ» անունն է ստացել։ Եւ իրաւացի է տված այդ անունը. Կազանլըզի հովիտն աշխարհիս ամենագեղցիկ տեղերից մինն է և կարող է մրցել իր գեղանկար տեսարաններով և փառահեղ բնութեամբ ամենագովելի վայրերի հետ։

Ի հնուց այդ հովիտի մէջ ապրում է բօլգարական ազգը. բայց երբ բալկանեան թերակղզու քրայ երեւացին թիւրքերը և ամբողջ Բօլգարիան ընկաւ նրանց ձեռքը, այն ժամանակից սկսած՝ յաղթված Բօլգարացիների հետ սկսեցին բնակվել և յաղթողները. բայց չնայած դրանց, այդ հովիտի մէջ բօլգարական տարրը միշտ մեծ էր։

— (\*) Այս պատմութեան հեղինակի անունը յայտնի չէ։

Դ 2206-Ա  
Դ 2210

Խաղաղ և աշխատահեր է այդ ժողովուրդը և հնուց սկսած, նա ծածկել է իր գեղեցիկ հովիտը և մօտակայ բարձրութիւնները սիրուն վարդերի և հիմանալի խաղողի այդիներով, որոնք հստակէտ ծաղիկների և բոյսերի հետ միասին լցնում են հովիտն անուշահոտութեամբ :

Մարդ ազատ և հեշտութեամբ է չունչ քաշում այդտեղ: Անցորդներին ամենայն սիրով հրաւիրում են դէպի իրենց շուաքը սաղարթախիտ անտառները, որոնք ծածկում են այն վայրերը որտեղից կարկաչակոս ազրիւրները վազում են դէպի հովիտը :

Մուս-թիւրքական պատերազմի (1877-1878) սկիզբն էր: Բօլգարական մի փոքրիկ քաղաքից ոչ հեռու, գեղեցիկ դաշտի մէջ, դարեւոր կազմու տակին նըստած էին մի խումբ երիտասարդ Բօլգարուհիներ: Այստեղ կային և՛ կանայք և՛ աղջիկը: Եւ, ասես, ջոկովի էին, մինը միւսից գեղեցիկ: Կողմանակի գիտողը հազիւ թէ մէկը միւսից գերադասէր որովհետեւ մէկին գեղեցիկ ասելով, բայց նա, յելով երկրորդին, սրան էլ գեղեցիկ կը գտնէր: միեւնոյն բացավառ աչքերով,

միեւնոյն սեւ-սաթի գոյնի գանգուրներով, միեւնոյն եղեգնի նման ձկուն հասակով:

Շատ և շատ էին գեղեցիկ այդ Բօլգարուհիները: Բայց գուք կը հարցնէք թէ ինչո՞ւ են նրանք հաւաքվել և ի՞նչ էին անում: Չեր հետաքրքրութեան, ընթերցո՞ղ, ես իսկոյն բաւականութիւն կը տամ: — Բօլգարիայում մի սովորութիւն կայ որ երբ աղջիկը մարդի է գնում, նըրաւ հարեւանուհիները և ընկերուհիները հաւաքվում են հարսնացուի մօտ և նրան օգնում օժիտը կարել: Ահա դրանով են այդ կանայք զբաղված, աշխատում են և իրենց սովորական մելամալճոտ երգերն երգում: Եւ մտաքերում էին Բօլգարուհիներն իրենց հայրենիքի անցած երջանիկ օրերը: մտաքերում էին իրենց երկրի հերոսներին որոնք գոռոզ նուաճողներին դէմ արխւն են թափել հայրենիքի համար:

Մարդի էր գնում մի հարուստ քաղաքացու աղջիկ, Մարդարիտը: Նա նստած էր ամենալաւ տեղը. իսկ ծնդաչոր նրան զարդարում էր գեղեցիկ վարդերով 49 տարեկան մի կին, նրա քոյրը, Հեղինէն:

Մանկահաս կնոջ աչքերը փայլում էին տիսուր լուսով. բայց նրանց ուշագրութեամբ նայելով, մարդ նկատում էր մի անմիտ արտայայտութիւն : Անբախտը խելքից զուրկ էր, նա խելագար էր : — Ահա նրա պատմութիւնը :

Մի տարի սրանից (1877) առաջ Հեղինէն պսակվեց մի Բօլգարացու հետ : Խաղաղ և երջանիկ էին նրանք ապրում. բայց այդ երկար շտեւեց, դժբախտութիւնը շուտով վրայ հասաւ և այդ դժբախտութեան պատճառը Հեղինէի գեղեցկութիւնն էր :

Նրանց քաղաքը թիւրք զօրք էր եկել այն ժամանակ : Տեսաւ զօրապետը Հեղինէին և նրա գեղեցկութիւնը գրգռեց վաւաշոտ թիւրքի կրքերը : Նա սկսեց հետեւիլ գեղեցկուհուն ամէն մի քայլափոխում : Թիւրքը համբերութիւնից նրան գցեց, և նա սպառնաց թէ բոլորն իր մարդուն և սկեսրայրին կըյայտնէ : Բարկացաւ զօրապետը և վճռեց ուժի զօրութեամբ տիրել Բօլգարուհուն :

Խաղողաքաղի ժամանակն եկաւ : Հեղինէի ամուսինը սկեսրայրին և աղջկերանց հետ այգին գնացին, տանը մնաց միայն գեղեցկուհին :

Արեգակն արդէն մայրն է մտնում, խաղող քաղողները չուտով տուն կը վերադառնան : Հեղինէն դուրս եկաւ նրանց դիմաւորելու . բայց հազիւ նա դուրս եկաւ քաղաքից, որտեղից որ է վրայ հասաւ մի ծիւառոր, ուժեղ ձեռքով գրկեց Հեղինէի մէջքից, թամբի վրայ գցեց և ձին զարկելով, աներեւութացաւ գեղեցկուհուն հետ :

Տնեցիք վերադարձան այգուց և Հեղինէին տանը չը գտան : Անցաւ մի օր, երկու օր, ամբողջ շաբաթ. ամուսինը փնտում էր նրան, բայց չէր գտնում. ասես, ջուրն է ընկել : Մի օր երբ բօլգարական ընտանիքը տիսրութեամբ խօսում էր կորածի մասին, խրճիթի դուռը մէկը կամաց կամաց ծեծեց : Դուռը բացին : Շէմքի վրայ երեւաց Հեղինէն : Ամուսինը վազեց գէպի նրան :

— Մուստաֆա աղան, թիւրք զօրապետը, անպատվեց ինձ, կատաղաբար աղաղակեց Հեղինէն և ընկաւ իր մարդու ստքերը : Վերջինս բարձրացրեց իր կնոջը, նայեց նրա աչքերին և կոկիծից անքած՝ նա խկոյն հասկացաւ որ իր կինը խելքից գրկած է : Անսպասելի դժբախտութիւնը

շարժել էր խեղճ զոհի ամրությ օրդանիզմը  
Մարդը մտած ման մէջ ընկաւ վրէժ-  
խնդրութիւնը նրա կրծքի մէջ եռում էր :  
Բայց ի՞նչպէս վճարել : Գնաւակո՞վ, Զէ՞  
որ օրէնքով Թիւրքիաի քրիստոնեայներին  
արդելված է զի՞նք կրելը : Վճառեցին բո-  
լորեքեան գանգատովել կաղիքն (գատա-  
ւորին) , վիրաւորող Թիւրքին դէմ : Գր-  
նացին :

Լսեց նրանց կադին , շարժեց գլուխը  
և ասաց .

— Այ քրիստոնեայ , ես քեզ օգնել  
չեմ կարող եթէ դու վկաներ չունես :

— Վկաներ կան :

— Որո՞նք են :

— Հարեւաններս :

— Ովքե՞ր են :

— Քրիստոնեայներ :

— Եթէ այդպէս է , գնա՛ խաղաղու-  
թեամբ քո գործին և թո՛ղ գանգատդ .  
միթէ՞ դու չես իմանում որ քրիստոն-  
եայ վկաներին մուսու լմանի դէմ չեն ըն-  
դունում . ուրիշ բան է եթէ քո վկաների  
մէջ մի ուղղափառ գտնվէր :

Եւ այսպէս կրկնակի վիրաւորված Բօլ-  
գարացին տուն գնաց . բայց վրէժն ա-

ւելի եւս եռաց նրա կրծքում : Նա վըճ-  
ռեց սպաննել վիրաւորող սպային : Որտե-  
ղից որ է նա մի հին հրացան գտաւ և  
սկսեց հետամուտ լինել Մուսթաֆա ա-  
ղային :

Անցաւ մի շաբաթ : Թիւրքը առւն էր  
վերագառնում : Ահա արդէն նա իր չէմ-  
քի վրայ է . յանկարծ , կարծես , գետնից  
բաւս նրա առջեւ ուժեղ Բօլգարացին :  
Թիւրքը նրան ճանաչեց : Մի ակնթար-  
թում նա յետ ցատքեց և գօտիկ հանեց  
րէվօլվէրը :

Միեւնոյն ժամանակ տժժաց Բօլգա-  
րացու գնտակը և թշնամու ծունկը փրշ-  
րեց : Վերջինս ընկաւ . Տեսնելով նրան  
դեռ կենդանի , Բօլգարացին վրայ հա-  
սաւ հրացանի կոթող վերջ տալու նրա  
կեանքին . բայց խսկոյն տնեցի Թիւրքերը  
դաշոյնները ձեռքին հաւաքվեցան Բօլ-  
գարացու վրայ :

Ճարապիկ , ինչպէս կատու , նա գուրս  
պրծաւ թշնամիններից և փախաւ : Թիւր-  
քերը նրա ետեւից ընկան , բայց Բօլգա-  
րացին արդէն հեռու էր . նա գնաց լեռ-  
ները որովհետեւ լցւ էր իմանում որ տա-  
նը մնալն այլ եւս նրա համար անկարելի

է : Նրան մահվան պատիժն էր սպասում ,  
մահմէտականի կեանքի դէմ դաւադրու-  
թեան համար . ուրիշ բան է եթէ նա  
ուղղափառ լինէր . այն ժամանակ նա այլ  
դատաստան կունենար :

Այս դէպքից յետոյ Հեղինէն մնաց ա-  
ռանց ամուսնու , հանգստութեամբ տա-  
նելով իր խելագարութիւնը :

## Բ

Միեւնոյն ժամանակ երբ զուարձանում  
էին երիտասարդ Բօլգարուհիները , քա-  
ղաքից գուրս եկաւ երիտասարդ Բօլգա-  
րցիների մի փոքրիկ խումբ որի մէջ  
գտնվում էր և Մարգարիտի նշանած Լե-  
ւոնը , մի բարձրահասակ քաջ տղայ : Բո-  
լորն էլ հագած ունէին զանազան դոյնի  
բաճկոններ և վարտիքներ , իսկ գլխնե-  
րին ֆէսեր :

— Եղայրնե՛ր , մի նոր լուր կայ , լը-  
սե՞լ էք . դիմելով ընկերներին ասաց Լե-  
ւոնը :

— Ի՞նչ նոր լուր , Լեւո՞ն :

— Երէկ Ֆիլիպօլու էի . այնտեղ ա-  
սում էին թէ Ուուսները պատերազմ՝ են  
բացել Թիւրքերի դէմ :

— Բարի լուր , եղբայր : միաձայն ա-  
սացին Բօլգարացիները : — Բայց չը լինի  
թէ Ուուսներն ազատելով մեր հայրենիքը  
Թիւրքիայից , իրենց երկրի հետ միացնեն ,  
շարունակեց մէ կը :

— Այո՛ , այդ այդպէս կը լինի եթէ  
մենք , Բօլգարացիներս , դիսկի պէս չը  
շարժվենք . իսկ եթէ մենք էլ զէնք բարձ-  
րացնենք թշնամիների դէմ , մեզանից ու-  
ժեղ զօրքեր կազմենք , այս դէպօտմ  
Ուուսները կը դժուարանան սեփականա-  
ցընել մեր երկիրը :

— Հիմի մենք ի՞նչ պիտի անենք եթէ  
լուրը միշտ է :

— Ի՞նչ վերաբերում է ինձի , ես ձեռ-  
քերս ծալուծ չը պիտի նստեմ . ես էլ եմ  
զէնք վերցնելու :

— Եւ մենք էլ քեզ հետ նմանապէս ,  
Լեւո՞ն : Բայց ասա՛ , միթէ՞ Մարգարիտին  
չես խղճում որ թողում ես մեն մենակ :

— Ի՞նչ արած , հայրենիքի ազատու-  
թեան ծառայելն աւելի թանգ է : Ես  
նրա հետ կը պատկիւմ երբ պատերազմը  
վերջացած կը լինի :

— Կատ բարի , եղբայր : Ափսո՞ս որ  
Հեղինէի ամուսնը , քաջասիրտ Գիցը ,  
մեզ հետ չէ :

— Աս նրան տեսել եմ :

— Ուր :

— Սարերում, Խանքէօյի մօտերքում :

— Հա'... ի՞նչպէս է նա :

— Լաւ է և միշտ ատելով ատում է Թիւրքերին . ԱՇ, եղբայրնե՛ր, ի՞նչ զարհուրելի բաներ էր պատմում նա, ասում է թէ Սերբիացոց պատերազմների ժամանակ Թիւրքերն ողջ ողջ էին այրում մեր Բոլգարացիներին, թէ՝ արդարներին և թէ՝ մեղաւորներին :

— Մենք էլ ենք լսել :

— Ասաց նմանապէս թէ նա պատահել է Ծուսթափա րէյին, բայց նորից նրան աջողվել է Գիցի ձեռքից կենդանի փախչել : Գիցը չի յուսահաստվում, Նա երդվել է սպաննել իր թշնամուն եթէ միայն կենդանի կը մնայ :

Այսպէս խօսելով, երիտասարդները մօտեցան կանանց խմբին : Լեւոնը բարեւեց իր հարսնացուին : Երկու սեռի երիտասարդները խառնվեցան իրար հետ : Զոււարծութիւնը կրկնապատկվեց, Սրինգի ձայնը բարձրացաւ, սկսեցին բոլգարական պարը :

Այստեղ ուրախանում էին . իսկ հեռուն, շատ հեռուն, կատարվում էին ուրիշ տեսարաններ որոնք ահեղ փոթորիկ էին գուշակում : Ուսւները մօտենում էին Դանուբին : Քրիստոնէութեան և Մահմետականութեան մէջ պատերազմ էր բացվել :

Բոլգարացիները գլուխ բարձրացրին ամենուրեք :

— Ազատութեան ժամը հասել է՛, լըսվում էր ամեն մի գիւղում ու քաղաքում և զինված խմբերով Թիւրքերի գէմ էին դուրս գալիս :

Բոլգարացիները կազմեցին առանձին գնդեր որոնք համաձայն գեներալ Գուրկօյի հրամանին, գիմեցին գէպի Տըրնովա քաղաքը, բոլգարական հին մայրաքաղաքը նուաճելու համար :

---

1877 թուականի յունիսի վերջերքն էր: Լեւոնը և Մարգարիտը մենակ այգումն էին :

Գլուխը գրած Լեւոնի կրծքին, Մարգարիտը քնքըսութեամբ նայում էր նրա աչքերին և ասում:

— Այս, Լեւոն, ի՞նչ կը լինի իմ գրութիւնը եթէ ինձնից հեռանաս . . . :

— Աստուծով ոչինչ չի պատահիլ, հո-  
գեակա:

— Լեռո՞ն, ինձ շատ է վախեցնում  
թիւրք զինւորների ներկայութիւնը մեր  
քաղաքում:

— Մի՛ վախիր, սիրելի՛ս, շուտով մենք  
կազմադիմք այդ անիծած թիւրքերից:

— Օ՛, իմ սիրեկ Լեռոն, միթէ՞ մեր  
հայրենիքը պիտի ազատ լինի:

— Անկասկած :

— Եւ թիւրքերը այլ եւս մեզ չե՞ն նե-  
ղելու և մենք հանգիստ պիտի աշխա-  
տե՞նք մեր այգիներում:

— Ի հարկէ, Մարգարիտ-ջան, մենք  
ունենալու ենք մեր սեփական դատաւոր-  
ները, մեր օրէնքները, մեր զինւորները:  
Գիցը տեսել է գեներալ Գուրկօյի մօտ  
հօլդարացի կամաւորներին...: Օ՛, ի՞նչ  
քաջ մարդիկ են նրանք... իմ սիրելի  
թռչնակ, ես էլ մերոնց հետ պիտի պա-  
տերազմեմ թշնամիներին դէմ և մերոնց  
հետ պաշտպանեմ մեր հայրենի երկիրը:

Սյապէս էր խօսում երիտասարդն իր  
աղաւնեակի հետ և երկուսն էլ ոգեւոր-  
ված էին աղաւութեան մեծ գաղափարով:

Երիտասարդները գուրս եկան այգուց

և դիմեցին դէպի քաղաքը : Մի մղոն էլ  
չէին գնացել երբ նրանց հանդէպ երեւա-  
ցին մի խումբ ձիաւորներ : Սրանք բաշի-  
բոզուկներ էին, Թիւրքաց այրուձիի մի  
մասը, որոնք կենում էին քաղաքի շրջա-  
կայքում: Նրանց դէմքերը արտայայտում  
էին վայրենութիւն և անգթութիւն, հա-  
գուստը պատառուած էր, զինված էին  
նիզակներով, թրերով և կենդրոնազարկ  
հրացաններով: Սյադ արիւնարբու ձիա-  
ւորների առաջ, որոնք աւելի ընդունակ  
էին թալաննելու քան թէ կռուելու, ար-  
շաւում էր նրանց մեծ աւորը: Սա զանա-  
զանվում էր բաշի-բոզուկներից թէ՛ իր  
աւելի մաքուր զգեստով և թէ՛ իր դէմ-  
քով: Սրա երեսը գաղանային չէր, այլ  
մինչեւ անգամ բաւականին գեղեցիկ էր.  
Բայց աչքերի մէջ փայլում էր կրքերի  
կայծը: Մուսթաֆա բէյն էր նա, Հեղի-  
նէի անսպատավողը:

Լեռոնը և Մարգարիտը հազիւ տեսան  
ձիաւորներին, իսկոյն գուրս եկան ճա-  
նապարհից և արագ քայլերով շտապեցին  
անցնել գաշար որ թաք կենան ըլրի քա-  
մակին ուր բուսած էր կալնու խիտ ան-  
տառ : Նրանք լւա էին իմանում որ

այդ յանկարծակի հանգիպումն ոչինչ լաւ  
բան չէր խոստանում . բայց Մուսթափախ  
հեռատես աչքերը տեսան փախչողներին :  
Դառնալով դէպի երկու , երեք բաշի-բո-  
զուկներին , նա ասաց թիւրքերէն .

— Կարծեմ գնացողները չուն Բոլգա-  
րացինե՞ր են :

— Այդպէս է , աղա՛ , պատասխանե-  
ցին նրանք :

— Որձ շանը սպանեցէք , իսկ եթէ է-  
քը գեղեցիկ է , ինձ մօտ քաշ տուէք .  
Նրա գնացքը ցոյց է տալիս որ այդ թըռ-  
չունը գեղեցիկ պիտի լինի և դրա հա-  
մար գալուրին պատկանելու չէ : Դէ գը-  
նացէ՞ք . . . մա՛րը :

Զիաւորները հրամանին երկրորդ ան-  
գամ շը սպասեցին : Կանգնելով տսպան-  
դակների վրայ և թեքվելով դէպ առաջ ,  
նրանք գոռում գոչումով ձիանը քշեցին  
փախչողների ետեւից :

Թշուաներն այդ նկատեցին :

— Լեւո՞ն , մեր ետեւից գալիս են սար-  
սափելի բաշի-բողուկները , ճչաց Մար-  
գարիտը :

Լեւո՞ն նրան չը պատասխանեց , այլ  
գրկելով նրա իրանը և այդպիսով նրան

օգնելով արագ գնալ , սկսեց վազել դէպ  
առաջ : Ահա նրանք այնքան հեռի չեն  
բլրից : Լեւո՞նը պատրաստ էր նրա վրա  
բարձրանալ . մի բողէ եւս և ահա նրանք  
ազատված կը լինեն : Բայց յանկարծ օ-  
դի մէջ տժժաց գնատակը . յուսահատ ա-  
զաղակ արձակելով , Մարգարիտը դուրս  
արձաւ նրա ձեռքերից և թաւալեցաւ բլրի  
զառիվայրով : Մի վայրկեան Լեւո՞նը քարի  
արձան կտրեց : Զարութիւնը , կատա-  
ղութիւնը նրան խեղդում էին . բայց մի  
նոր գնտակ նրան ուշքի բերեց , թեթեւ  
վիրաւորելով նորա ուսը : Նա անկարող  
էր իր սիրելուն օգնել : Կայծակի արա-  
գութեամբ նա վեր բարձրացաւ և մտաւ  
անտառը , վեր ելաւ մի կաղնի որ տեսնէ  
թէ իւր հարսնացուի հետ ի՞նչ պիտի լինի :

Իսկ բլրի ներքեւ հետեւեալն էր կա-  
տարգում : Հազիւ Մարգարիտը գետին  
ընկաւ , իսկոյն վրայ հասաւ ինքը Մուս-  
տաֆա բէյը : Նայելով աղջկայ վրայ՝

— Անպիտաննե՞ր , գոռաց նա բար-  
կութեամբ . վիրաւորեցիք թունիկին , իսկ  
գայլին ձեռքից բաց թողեցիք . ձեզ ցա-  
մաք հացով կերակրելն էլ է մեզք :

Եետոյ նա ձիուց իջաւ , մօտեցաւ Մար-

գարիտին և կուանալով, ականջը դրեց վի-  
րաւորվածի կրծքի վրայ : Սիրառ գեռ չէր  
դադարել բարախելուց : Մուստաֆան  
վերքն որոնեց, տեսաւ որ գնտակը մը-  
նացել է ուսի մէջ : Նա հրամայեց վեր-  
ցընել աղջկան, իսկ մի բաշի-բոզուկ ա-  
սաց .

— Աղա՛, ինչի՞ համար վերցնել նրան.  
լսւ չի՞ միանդամից սպանել, ինչ-  
պէս վայել է մի քաջ ձիաւորի :

— Ասի՛ր, անպիտա՞ն, կատարի՛ր ինչ  
քեզ հրամայում եմ. այս ասելով նրա  
ձեռքը սեղմում էր դաշոյնի երախակա-  
լը : Բաշի-բոզուկները բարձրացրին ու-  
շաթափ Մարգարիտին, դրեցին թամքի  
վրայ և ձիանը քշեցին դէպի քաղաք :

Լեւոնն ամենը տեսնում էր թէպէտ  
ոչի՞չ չէր լսում : Մուսթաֆան նայելով  
նա ճանաչեց Գիցի կնոջ անպատվողին :

— Այ մուսուլման, կրծտելով ատամ-  
ները և սեղմելով բուռնցները չնշաց  
լեւոնը . Մարգարիտի մահվան պատճառը  
դու ես, վրէժը քեզնից պիտի առնեմ և  
քո մահվան ժամը այնքան էլ հեռու չէ...  
Նա ծառից ցատկեց և անյայտացաւ ան-  
տառին մէջ :

¶

Գուրկօն արդէն Տըրնօվա քաղաքումն  
էր . Գարբօվօ և Աէլվի քաղաքները առ-  
նուած էին : Նրա առաջ նահանջում էին  
Թիւրքերը, չը նայելով որ նրա ձեռքի  
տակ կային միայն մի գունդ հեծելազօրիք  
և թօլգարական կամաւորները : Եջողու-  
թիւնից օգուտ քաղելով, քաջ գեներալը  
մտածեց Տըրնօվայից ուղղակի անցնել  
բալկանեան սարեցը, գրաւել նրա կիր-  
ճերը, որոնց Թիւրքերը խիստ պաշտպա-  
նում էին, և այդպիսով Ռուսաց զօրքերի  
առաջ ազատ մուտք բաց անել :

Հիանալի՛ միտք :

— Բայց ի՞նչ կերպով պէտք է անցնել,  
հարցնում էին շատերը :

Գեներալի գլխում միտքն արգէն հա-  
սունացել է . Նա ասաց .

— Հարկաւոր է գտնել սարերում մի  
այնպիսի անցք որ Թիւրքերին անցայտ է :

Սկսեցին մի այնպիսի մարդ փնտուել  
որ սարերի մէջ մի նոր ճանապարհ իմա-  
նար :

Այդ միջոցին Տըրնօվա եկան լեւոնը  
և Գիցը : Լեւոնը վերոյիշեալ տիսուր անց-  
քից յետոյ դիմեց ուղղակի դէպի սարե-

րը ուր պատսպարվում էր Գիցը : Աերջինս  
ապրում էր լսանքէ օյի կիրճում, ամենա-  
վայրենի և անանցանելի տեղում : Գիցն  
այդտեղ իրան բոլորովին ազատ էր բզ-  
գում, ոչ ոքից չէր վախում որովհետեւ  
նա լաւ էր իմանում որ Թիւրքերը նրան  
անմատչելի են կարծում, ասելովթէ այն-  
տեղ ոչ մի գաղան չի գնում, ոչ մի թե-  
ւաւոր չի թռչում և եթէ որեւէ անվախ  
ձիաւոր մօտենումէ նրան, ձիու գլուխն  
խկոյն շուռ է տալիս որ շուտով հեռա-  
նայ այդ վայրենի տեղերից :

Լեւոնը հասնելով Գիցի մօտ, նրան  
ձանապարհ ընկնելիս տեսաւ :

— Ո՞ւր ես գնում, Տըրնօվա՞ն, հարցրեց  
Լեւոնը :

— Սյո՛, բայց ի՞նչ է պատահել քեզ  
հետ, գու բոլորովին սփրթնած ես :

Վերջինս յուսահատութեամբ ձեռքը  
շարժեց և պատմեց իր գլխով անցածը :

— Ճանաչեցի՞ր այն գարշելուն, հար-  
ցրեց Գիցը :

— Ճանաչեցի... այո՛, ճանաչեցի :

— Ո՞վ է :

— Մուստաֆան, մեր ընդհանուր թըշ-  
նամին :

Գիցը կրծտացրեց ատամները և բար-  
կութեամբ սեղմելով բռունցները, բա-  
ցագանչեց .

— Նրա վերջին ժամն այնքան էլ հե-  
ռու չէ, լեւո՞ն, մի՛ վախիր :

Նրանք գուրս եկան հիւղից և ձանա-  
պարհ ընկան դէպի Տըրնօվա :

Մոայլ և վայրենի է այդ ուղին : Կար  
ժամանակ երբ կիրճի միջով անցնում էր  
այն ձանապարհը որով հարաւային Բօլ-  
գարացիները հաղորդակցում էին հիւսի-  
սայինների հետ : Բայց անցել են արդէն  
շատ տարիներ այն ժամանակներից երբ  
այդ ձանապարհը բարձի է թուշ և որ ան-  
յարմարութեան պատճառով

Երեւակայեցէք մի հազիւ նշմարելի  
նեղ կածան որ երբեմն բարձրանում է  
մերկ և անմատչելի մարդի գլուխը, երբեմն  
ցածանում է ուղաձիգ լննջերով և կոր-  
չում է մթին անդունդի մէջ, իսկ այն-  
տեղից նորից բարձրանալով, գնում է մը-  
ռայլ ձորի եղերքով որի յատակը բոլո-  
րովին ծած կված է ձանապարհորդի աշ-  
քերից : Բայց դրանից, կածանի վրայ հա-  
մարեա ամեն մի քայլափոխում կուտակ-  
ված են քարերի սալեր որոնք թափում

են սարերից : Մոայլ կախված են այդ սարերը ճանապարհորդի գլուխ վրայ՝ ծածկելով նրանից արեգակի լոյսը : Խիտ անտառներն աւելցնում են այդ ճանապարհի վայրենութիւնը :

Լեռնը և Գիցը համարձակ մտան այդ անհիւրընկալ սարերը և ինչպէս լեռնականներ անվախ շարունակեցին իրենց դժուար ճանապարհը : Նրանք քիչ էին խօսում, ամեն մէկը զրազված լինելով իւր տիսուր մոքերով : Երբեմն ճանապարհորդները կարծ խօսում էին և մէշտ իրենց թշնամու մասին : — Արդեօք կըյաջողպի իրենց զրէժ հանել, ասում էին նրանք և տենդու ձեռքով սեղմում իրենց թրերի երախտակալը :

Մի օր ու գիշեր գնում էին անբախտ երիտասարդները որոնք խաղաղ ու աշխատասէր պարտիզաններից դարձել են արնի ծարաւ կատաղած մարդիկ :

Սյո՛, ինչե՛ր չեն կարող անել բանութիւնը և օտարի լուծը : Մտածել են այդ մարդիկ որ իրենք մի ժամանակ պիտի այնպէս զգան և վարվեն, ինչպէս չար մարդիկ որոնք միշտ արիւն են փնտուում :

Ահա նրանք Տըրնօվայի մէջ են : Սյո-

տեղ ամեն ինչ կենդանացել է : Քաղաքը լիքն է ուսւ և բոլգարացի զինուրներով : Քաղաքացիների երեսներն ուրախութեամբ են փայլում :

Զանգակի ձայնը քաղցր զօվանչում է : Մինչեւ այն ժամանակ մուսուլմաններն արգելում էին զանգակ բանեցնելը : Գիցը և Լեռնը վերցրին իրենց Փէսերը և ջերմեանդութեամբ խաչակնքեցին երեսները : Նրանց պատահում էր տեսնել և ծանօթ մարդիկ :

— Բարեւ, եղբայրնե՛ր, ասում էին նրանք մեր ճանապարհորդներին :

— Բարեւ, ի՞նչպէս էք :

— Լաւ ենք, իսկ դո՞ւք :

— Շատ վատ : Թիւրքերն աւելի են նեղացնում մեզ :

— Մի քիչ էլ սպասեցէք, նրանց բանը բուրդ կը լինի : Գեներալը մի մարդ է փնտուում որ սարերի միջով մի ճանապարհ ճանաչի . մինչեւ այժմ ոչ ոքի չեն գտել :

— Մենք իմանում ենք այդպիսի մի ճանապարհ : Նրան յայտնեցէք մեր մասին :

Ասացին նրանց մասին : Գիցին և Լեռնին կանչեցին գեներալի մօտ և սկսեցին նրանց հարցուփորձ անել խանքէ օյի կիրձի

մասին : Վճռեցին այդ ճանապարհով դը-  
նալ : Գուրկօն յանձնեց 150 մարդ գե-  
ներալ թառլիխն որ գնան ճանապարհը  
մաքրելու . իսկ ինքը խոստացաւ նրանց  
ետեւից մնացած ուժերով հետեւել :

Թառլիխը ճանապարհ ընկաւ . նրան ա-  
ռաջնորդում էին մեր երկու հօլգարացի-  
ները : Ճանապարհը մաքրեցին : Թէպէտ  
նա այնքան էլ յարմար չէր, բայց այնքան  
լայն էր որ նրանով կարող էր զօրք ընթա-  
նալ : Թառլիխ գուրս գալուց յետոյ ,  
հետեւեալ օրը ճանապարհ ընկաւ ինքը  
գեներալ Գուրկօն :

## Ե

Գիշեր էր , երկինքը պարզ : Երկնա-  
կամարն ամբողջովին ծածկված էր փայլուն  
աստղերով որոնք ինչպէս ադամանեներ  
անդրադարձում էին գետակների և կար-  
կաջանոս լեռնային աղբիւրների կոհակ-  
ներին մէջ : Իսկ նրանց մէջ սահում էր  
արծաթափայլ լուսինը , իր գոյնը տալով  
թափանցիկ տամպերին : Հոգիւաների օգը  
զով էր և հուաւէտ ծաղիկներով էր բու-  
րում . սարերի գագաթներին և լանջերին  
տարածված էին ամպերը . ցուրտ էր և  
խոնաւ :

Նիզամների և բաշի-բողուկների մի  
քանի գունդեր Մասթավարէյլի հրամա-  
նատարութեան տակ , կանգնած էին այդ  
ժամանակ Խասքէյ գիւղում որ զետեղ-  
ուած էր համանուն կիրճի հանգէպ : Լեռ-  
նային ճանապարհը պաշտպանում էին եր-  
կու բաշի-բողուկ : Սրանք անհոգ նստած  
էին գետնի վրայ և սուս ու բուս ծխում  
էին :

— Ի՞նչ ենք այստեղ վայր ընկել , իր-  
բահի՞մ . լուսթիւնը խանգարելով ասաց  
մէկը :

— Ես ինքս էլ չեմ իմանում :  
— Ինչո՞ւ համար պաշտպանել այս  
անցքը . միթէ՞ թշնամին կարող է նրանից  
անցնել :

— Կանցնեն եթէ Ալլահը նրանց թեւեր  
տայ :

— Բայց այդպիսի բան կարելի՞է միթէ :  
— Չեմ կարծում :

— Եթէ այդպէս է , լսիր ինչ եմ ասում ,  
իբրահիմ . ձի հեծնենք և գնանք աւար  
ձարելու . մենք այն գիւղում դեռ եղած  
չենք . և բաշի-բողուկը ձեռքը մեկնեց  
գէպի արեւմուտք :

— Շատ լաւ կը լինի , բայց վախենում

մասին : Վճռեցին այդ ճանապարհով գը-նալ : Գուրկօն յանձնեց 150 մարդ գե-ներալ Բառեխին որ գնան ճանապարհը մաքրելու . իսկ ինքը խոստացաւ նրանց հետեւից մնացած ուժերով հետեւել :

Բառեխը ճանապարհ ընկաւ . նրան ա-ռաջնորդում էին մեր երկու հոլդարացի-ները : Ճանապարհը մաքրեցին : Ո՞չպէտ նա այնքան էլ յարմար չէր, բայց այնքան լայն էր որ նրանով կարող էր զօրք ընթա-նալ : Բառեխի գուրս գալուց յետոյ , հետեւեալ օրը ճանապարհ ընկաւ ինքը գեներալ Գուրկօն :

## Ե

Գիշեր էր , երկինքը պարզ : Երկնա-կամարն ամբողջովին ծածկված էր փայլուն աստղերով որոնք ինչպէս աղամանդներ անդրադարձում էին գետակների և կար-կաջանու լեռնային ազդիւրների կոհակ-ներին մէջ : Իսկ նրանց մէջ սահում էր արծաթափայլ լուսինը , իր գոյնը տալով թափանցիկ ամպերին : Հովիաների օգը զով էր և հուաւէտ ծաղիկներով էր բու-րում . սարերի գագաթներին և լանջերին տարածված էին ամպերը . ցուրտ էր և խոնաւ :

Նիզամների և բաշի-բողուկների մի քանի գունդեր Մուսթաֆա բէյի հրամա-նատարութեան տակ , կանգնած էին այդ ժամանակ Խասքէօյ գիւղում որ զետեղ-ուած էր համանուն կիրճի համդէպ : Լեռ-նային ճանապարհը պաշտպանում էին եր-կու բաշի-բողուկ : Սրանք անհոգ նստած էին գետնի վրայ և սուս ու բուս ծխում էին :

— Ի՞նչ ենք այստեղ վայր ընկել , իբ-րահիմ . լուսթիւնը խանդարելով ասաց մէկը :

— Ես ինքս էլ չեմ իմանում :

— Ինչո՞ւ համար պաշտպանել այս անցքը . միթէ՞ թշնամին կարող է նրանից անցնել :

— Կանցնեն եթէ Ալլահը նրանց թեւեր տայ :

— Բայց այդպիսի բան կարելի՞ է միթէ :

— Չեմ կարծում :

— Եթէ այդպիս է , լի՞ր ինչ եմ ասում , իբրահիմ . ձի հեծնենք և գնանք աւար մարելու . մենք այն գիւղում գեռ եղած չենք . և բաշի-բողուկը ձեռքը մեկնեց գէպի արեւմուտք :

— Շատ լաւ կը լինի , բայց վախենում

եմոր մեծաւորը գայ և մեզ այստեղ չը գտնի. այն ժամանակ նա մեզ մտրակով այնքան կը ծեծի որ հոգիներս դուրս կը գայ :

— Գրողը նրան տանի՛: Իբրահի՛մ, նրա պէս աղահ ես դեռ չեմ տեսած. ինչ ո՞ր ձեռք ենք բերում, մինակ ինքն է կլանում. և ինչ տարօրինակ մարդ է. այն զեառը աղջկանից որին, մտաբերո՞ւմ ես, մենք վիրաւորեցինք, ձեռք չի քաշում. մեր օրէնքով՝ սպանի՛ր. ո՞չ, իր մօտ է տարել, երեւի դուր է եկել. այժմ նրան բժշկում է մնթիմը, իսկ առողջանալուն յետոյ ինքն է իմանում ինչ պլատի անի :

Այսպէսէին խօսում բաշի-բողուքները երբ սկսեց երեւալ առաւտեան արշալցութափում: Հորիզոնի վրայ սիպտակին է տալիս թափանցիկ շերտը. աստղերը կամաց կամաց սիրդնումէին: Բայց ահա տեսարանը յանկարծ փոխվեց. արեգակի առաջին ճառագայթները կարմրացրին երկինքը :

Այդ ժամանակ գեներալ Գուրկօփ առաջապահ զինւորները անցնումէին Խանքէօի հոգիտը և կամաց կամաց մտնում կազանլը դաշտը: Զը նայած որ նրանք ամենայն զգուշութեամբ էին ընթանում,

այնու ամենայնիւ ձիանի սմբակների աղմուկը, զէնքերի շառաչիւնը հասան լեռնու Ալբանիաի որդիների սուր ականչը : Նրանք սկսեցին ականջ դնել:

— Ոչինչ չե՞ն լուսմ, իբրահիմից կամաց հարցրեց իր ընկերը :

— Կարծեօք զինւորներ են դալիս, պատասխանեց միւսը :

Այնուհետեւ նրանք նստեցին իրենց ձիերի վրայ, կանգնեցին ասպանդակների վրայ դէպ առաջ և որսի չների նման սկսեցին օդը հոտուտել:

Առաւոտեան քաջաթուխապի միջից երեւաց մի ինչ որ սեւ բան: Նա կամաց կամաց մօտենում էր և պարզվում: Ահա երեւաց մի ձիւոր, նրա ետեւից երկրորդը, երրորդը, չորրորդը...:

— Թշնամիներն են, աղաղակեցին բաշի-բողուկները, ձիերի գլուխները շուռ տուին և յետ փախան :

Զինւորներին առաջնորդում էին Լեռնը և Գիցը, որոնք և նկատեցին բաշի-բողուկներին :

— Մեզ նկատեցին, ասաց Լեռնը, ցոյց տալով սեւին տուող երկու կէտերի վրայ. նրանք բաշի-բողուկներ են... ո-

րոնք աղմուկ են բարձրացնելու , շտապեցէք : Նրանք ձիերը քչեցին և կարճժամանակից յետոյ առան խանքէօյ գիւղը :

Q

Այդ գիւղը վերցնելու ժամանակ Լեւոնը և Գիցը առաջիններիցն էին որոնք մտան գիւղը : Հազիւ բաշի-բոզուկները թշնամուն տեսան , իրենց սովորութեան համեմատ շուռ տուին ձիերի գլուխները և չորս կորմը ցրվեցան , չը լսելով իրենց գլխաւորի՝ Մուստաֆա բէյի հրամաններին : Վերջինս մինակ մնալով հայհոյում և անիծում էր վախկուններին :

Լեւոնը և Գիցը Թիւրքերի մէջ նկատեցին իրենց ընդհանուր անձնական թշնամուն : Արդէն ամեն մի Թիւրք տեսնելիս , նրանց մէջ եռում էր արիւնը . իսկ այժմ արնոտ վարագոյր էր ծածկել նըրանց աչքերը . նրանք միայն մի մարդ էին տեսնում : Այդ մարդը Մուստաֆա բէյն էր :

— Այժմ նա այլ եւս չի աղատվիլ , գոչեցին միաձայն երկու Բօլգարացիները և միասին ընկան բէյի ետեւից որ այդ ժամանակ բաժանված էր միւս Թիւրքերից :

Մուստաֆա բէյը վախկուններից չէր :

Տեսնելով Բօլգարացիներին , նա նրանց հանդիստ սպասեց և երբ վերջիններս մօտեցան , նա րէվօլէրից երկու անգամ արձակեց Բօլգարացիներին վրայ : Գնտակները նպատակին չը հասան :

Բօլգարացիները շարժելով իրենց հրացանները , ձիերն առաջ քչեցին : Նրանց դէմքերն այնքան զարհուրելի էին և վայրենի , որ մինչեւ անգամ քաջ բէյն էլ վախսեց : Ճարապիկութեամբ յետ մղելով Գիցի հարուածը , նա դուրս պրծաւ և ձին քչեց : Բօլգարացիներն ընկան նրա ետեւից : Մի ժամ շարունակեց կատաղի ձիարշաւը . բայց բաշի-բոզուկի տակի ձին աւելի լաւ էր , նա սկսեց աւելի և աւելի հեռանալ : Լեւոնը յուսահատ աղաղակեց .

— Գի'ց , նա հեռանում է , միթէ՞ այս անգամ էլ նա պիտի աղատվի :

Գիցն ոչինչ չը խօսեց . բռնեց իր հըրացանը և արձակեց թշնամուն վրայ : Գնտակը տժժաց : Մուստաֆան շարժեց թեւերը , ձեռքերով աչքերը ծածկեց և ընկաւ գետնի վրայ : Ձին մինակ վախսաւ : Մի ակնթարթում Բօլգարացիները նրա մօտ էին : Նա դեռ չնչում էր : Թշնամի-

Ները թեքվեցան նրա երեսի վրայ : Վեր-  
ջինս նայեց նրանց :

— Ուր է Մարգարիտը, ահեղ գոռաց  
Լեւոնը :

Մուստաֆան շարունակեց նրանց սառ-  
նարիւն նայիլ : Լեւոնը կրկնեց իր հարցը.  
բայց պատասխան չը ստանալով, իր գա-  
շոյնը բարձրացրեց բէյի վրայ : Այն ժա-  
մանակ վերջինն խուզուտ ձայնով ասաց .

Եթէ հարցնում ես այն վիրաւոր կնոջ  
մասին, որը ինձ մօտ էր լինում, Ալլահը  
նրան իր մօտ է տարել :

— Մեռի՛ր, անպիտա՞ն, կատաղու-  
թեամբ բացագանչեց Լեւոնը :

— Սպասի՛ր, նրա ձեռքը բոնելով ա-  
սաց Գիցը. այդ աւազակն արժանի չէ որ  
մեռնի մեր գաշոյններից . նրան ծառից  
կախենք, թողարկաներից նրա գիշա-  
տիչ մարմինը կտցուտեն : Մի րոպէից յե-  
տոյ Մուստաֆան ծառի վրայ էր :

Լոռութեամբ հեռացան նրանից թըշ-  
նամիները :

— Այժմ ո՞ւր, հարցրեց Լեւոնը Գիցից :

— Աստուած քո Մարգարիտի հոգին  
լուսաւորէ . իսկ ես ցանկութիւն ունիմ  
չեղինէին աենել . յետոյ կը մտնեմ մեր  
կամաւորների գունդը :

— Ես էլքեղ հետ. այժմ ինձ մնում  
է միայն թշնամիներից վրէժ հանել մեր  
հայրենիքի համար, մինչեւ արեան վերջին  
կաթիլը :

Բօլգարացիները կատարեցին իրենց  
խօսքը : Մնաս բարեաւ ասելով իրենց  
բարեկամներին, նրանք գրվեցան բօլգա-  
րական կամաւորների շարքերում. միեւ-  
նոյն ժամանակ նրանք իրենց հետ բերին  
շատ ընկերներ :

Հասել էր ժամը և Բօլգարացիները  
վրէժ էին առնում . . . :

Վերջ

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիաի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չդրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ը

ԹԻՒՐՖԻԱԻ ՀԱՅԵՐՆ

ԵՒ

ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ

ԳՐԵՑ Պ. Ա.

Թիւրքիաի Հայերին և իրենց գըրացի Թիւրքերի, Քիւրդերի, Զէրքէների, Ասորիների, Եղիտիների, Թշղրլպաշների և այլ աղգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրական տեղեկութիւններ տրուած են այս տետրական մէջ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող

այլ և այլ աղգէ բնակիչների թուին մէկ բաղդատական ցուցակը կցուած է տետրական վերջը։ Դինն է 50 սան. թիմ, փոստի ծախքը Արմենիաի խըմբագրատունէն վճարուելով։ (Պարսկաստանի Հայերին համար 35 սանի իմ)։

Թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

«ԱՐՄԵՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ

Ա. ՏԱՐԵԿԱՆ

(1885-86)

Հատեր կը փափաքէին ունենալ Արմենիաի Ա. տարեշրջանի թիւերը. բայց որովհետեւ այդ թիւեր բոլորովին ըսպառած են, նոյն աարեշրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն 30ի շափ ամփոփուած են այս Յաղաքարի մէջ, մի քանի թըրդակցութիւններով մէկտեղ որոց մասին խօսուած է առաջնորդող յօդուածներին մէջ։ Այդ յօդուածների մէջ

կան «Ծնտեսական հարցեր» (Վանի տընտեսական վիճակը), «Թիւրքիան չուզեր լսել», «Ի՞նչ պէտք է անել և ի՞նչ կրնանք անել» (Մայրայեղութիւն), «Եւրոպաբնակ Հայերն և կ. Պօլսի Պատրիարքարանը», «Պէտք է գծել մեր ծրագիր», «Մեր որժեր համախմբելու մի առաջարկ», «Ինչու չեն յաջողիք մեր գործեր», «Մխալ մտածումներ» (Վանի Պօղոս Եպիսկոպոսի քարոզք որ խօսած է Վանի Արարք քաղի Էկեղեցուն մէջ 1885 մարտ 31ին), «Իգական սեռի մասնակցութիւնը Հայրենասիրական գործին», «Հայ ժողովրդի և թիւրք զօրքերի կռիւը Վանի մէջ» (Նամակ Վանին) ևայլն ևայլն :

«Արմենիա»ի Յուղաբարը իր Յառա .  
ջարանով մէկտեղ կը բաղկանայ 124 եւ .  
րեսներէ , ութածալ գիրքի վրայ  
տպագրուած : Գինն է Պարսկաստանի  
Հայերին համար 1 ֆրանք . ուրիշ ա .  
մեն տեղերի համար 1 ֆր . և 40 սնթմ :

Փոստի ծախքը կը վճարուի հրա .  
տարակողէն :

ՀՀ Ազգային գրադարան



NL0343299

